

**ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

*Նինա Ջաղինյան*

DOI: <https://doi.org/10.58726/langlit-254-263>

***Հանգուցային բառեր.** գեղարվեստական տեքստ, հաղորդակցություն, հաղորդակցային գործառույթ, թարգմանիչ, գեղարվեստական երկխոսություն, բնագիր տեքստ, խոսության զործառույթ, ոճական արտահայտչամիջոց*

**Նախաբան**

Թարգմանական համարժեքությունը գեղարվեստական թարգմանության հենքային խնդիրն է, որի գլխավոր չափանիշներից է բնագրի և թարգմանվածքի արտահայտության և բովանդակության հնարավորինս ամբողջական համընկնումը, մի բան, որ միտված է պահպանելու տեքստի լեզվամտածողությունը, ոճական ինքնատիպությունը և գեղագիտական ճաշակը: Թարգմանության համարժեքության մասին խոսելիս հայտնի տեսաբան Թ. Սավորին շեշտում է ստեղծագործության ձևի և բովանդակության համապատասխանության պահպանման խնդիրը թարգմանվածքում [2]:

Գեղարվեստական թարգմանությունը ինքնին ստեղծագործական գործունեություն է և, բնականաբար, առնչվում է գրականությանը և լեզվին՝ լայն իմաստով, բնագիր և թիրախ լեզուների հարաբերմանը, աղբյուր լեզվի լեզվատճական առանձնահատկությունների հնարավորինս պահպանմանը:

Միով բանիվ, թարգմանվածքը պետք է դիտարկվի որպես բնագրի լեզվի, գաղափարի, փիլիսոփայության համալիր մեկնություն:

Թարգմանության համարժեքությունն անմիջականորեն կապված է բնագրի հեղինակի աշխարհընկալման և դրա՝ թարգմանության լեզվում համարժեք վերստեղծման հետ, որն էլ պայմանավորում է համարժեքության՝ լեզվաճանաչողական հարթության մեջ դիտարկելու անհրաժեշտությունը. Գեղարվեստական ստեղծագործության լեզվաճանաչողական կաղապարների լայնակի ուսումնասիրությունը նպաստում է բնագրի հեղինակի պատկերա-

ցումների առավել ճշգրիտ հետազոտմանը, ուրեմն և համարժեք թարգմանության ստեղծմանը:

Հարկ է նշել, որ գեղարվեստական ստեղծագործության և նրա թարգմանության ուսումնասիրությունը պետք է կատարվի հիմնականում բանասիրական մեկնարկեստի տեսանկյունից, այն է՝ լեզվաոճական, լեզվաբանաստեղծական և նմանատիպ այլ միջոցների օգնությամբ:

Թարգմանական համարժեքության խնդիրը լայնորեն քննելիս առջնահերթ է այն դիտարկել նաև միջմշակութային երկխոսության համաշարում:

Մեր ուսումնասիրության տիրույթում հատկապես գեղարվեստական տեքստի երկխոսությունների գործնական և տեսական արծարծումներն անելիս հատուկ շեշտադրում ենք միջմշակութային հարթության հաղորդակցական գործառությունների հիմնախնդիրը և դրա լիարժեքությունն ապահովող տարրը: Գեղարվեստական տեքստի հեղինակը վերարտադրում է կենդանի խոսակցական լեզուն, որն ինքնին վկայում է, որ այդ վերարտադրումը բացարձակ կրկնությունը չէ այն ամենի, որ կա կենդանի լեզվում, մի բան, որին թարգմանիչը առաջնահերթ նշանակություն պետք է տա: Մեր ուշադրության կիզակետում (հատկապես տեսական արծարծումներ անելիս) կարևորում ենք այն, որ գեղարվեստական երկխոսական տեքստում խոսակցական լեզուն կատարում է գեղագիտական գործառույթ, դառնում ստեղծագործության ընդհանուր կառույց, նրա գեղագիտական բովանդակության մի տարրը, և, ըստ այդմ էլ թարգմանելիս ենթարկվում անխուսափելի փոփոխությունների: Մենք գտնում ենք, որ համարժեքության խնդիրը անպայմանորեն պետք է դիտարկել հաղորդակցության հենքի վրա և շրջանակներում, քանզի կենդանի խոսքը, լինելով ասելիքաշատ, կարող է համապարփակ պատկերացում տալ գեղարվեստական նյութի, նրանում գործող անձանց հուզական աշխարհի մասին, որն էլ թարգմանչին կօգնի առավելապես ըմբռնել հեղինակային ասելիքը և հավուր պատշաճի ներկայացնել այն թիրախ լեզվում:

Գեղարվեստական ստեղծագործությունը այլ լեզվի և մշա-

կույթի ներկայացուցչին մատուցելու համար թարգմանելիս հաղորդակցական հեղինակ-տեքստ-ընթերցող պարզ եռանկյունը ձեռք է բերում առավել բարդ պատկեր, և, բնականաբար, Ռոման Յակոբսոնի հայտնի հաղորդակցական կադապարը այստեղ կիրառելը տեղին է թվում, քանզի նրանում ներկայացված են բանաստեղծական հաղորդակցման լեզվական և արտալեզվական գործառույթները: Այսպես՝ համաձայն Ռ. Յակոբսոնի՝ հաղորդակցման գործառույթները ծավալվում են վեց գործոնների միջև՝ հասցեագրող, հասցեատեր, հաղորդում, համաշար, կապ և նշակարգ (կող) [5]: Եթե այս կադապարին փորձենք ավելացնել Մ. Բախտինի՝ գեղարվեստական ստեղծագործության վերլուծության մշակութաբանական մոտեցումը, ապա գեղարվեստական ստեղծագործության միջմշակութային փոխակերպումը և հաղորդումը կվերածվեն բազմաձայն պատկերի իրագործման: Սակայն «թարգմանիչ-կատարողի» գործոնից բացի՝ թվարկվածին գումարվում է հետևյալ բարդությունը: Այսպես՝ Գ. Հովհաննիսյանը նշում է, որ էական նշանակություն ունի երկու լեզու-նշակարգերի և մշակույթ՝ համատեքստերի հաղորդակցման գործոնը [7]: Ըստ Մ. Զոլյանի՝ Ռ. Յակոբսոնի հայեցակարգի մեջ ամենակարևորն այն է, որ նա կողմնորոշել է հենց լեզվական գործառույթի գաղափարը՝ այն դիտարկելով ոչ թե որպես խոսողի-ունկնդրի մտադրություն, այլ որպես մի խումբ էական նշաններ, որոնք լեզվի ներքին փոխակերպման արդյունք են [4]: Այս ամենի դիտարկումը էական նշանակություն ունի թարգմանական համարժեքության հարցը քննելու հարցում: Թարգմանության համարժեքությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնագրի և թարգմանվածքի իմաստային հնարավոր հարազատությունը, որին նպատակադրված է թարգմանիչը աշխատանքի ընթացքում: Թարգմանության համարժեքության սահման է թարգմանության ընթացքում բնագրի բովանդակության բացարձակ պահպանման հնարավոր աստիճանը, սակայն հարկ է նշել, որ յուրաքանչյուր առանձին թարգմանության բնագիր տեքստին հարազատությունը տարբեր աստիճանի է և տարբեր միջոցներով է արտահայտվում ու հաստատվում, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ միևնույն լեզվական փաստը տարբեր ար-

ժեքներ ունի տարբեր մշակութային միջավայրերում: Համարժեքության հարցը համապարփակ քննելիս անհրաժեշտ է նախ և առաջ ճշգրտել «համարժեք» հասկացության իմաստային սահմանները, քանի որ թարգմանաբանական գիտության մեջ այդ բառն ակնհայտորեն եզրաբանական նշանակությամբ է հանդես գալիս: Ըստ Գ. Հովհաննիսյանի՝ «Համարժեքությունը մի հարաբերություն է կամ, ավելի ճշգրիտ ասած, հաղորդակցական գործառույթ, որն իրականանում է թարգմանված միավորի մեջ բնագիր խոսքային միավորի ձևական և իմաստային բոլոր էական հատկանիշների պահպանվելու պայմաններում: Այսպես՝ եթե բնագիր խոսքային միավորը արձակ երկխոսություն է, ապա այն լեզվական, մշակութային, հաղորդակցական, հասարակական-հոգեբանական բովանդակային առանձնահատկություններից բացի օժտված է նաև լեզվի և շարադրման ակնառու ձևական հայտանիշներով, որոնց բացահայտումն ու փոխանցումն ապահովում է հեղինակի լեզվական մտածողության հարազատ արտացոլումը [8]:

Ի հաստատումն ասվածի՝ նշենք, որ Էոնեստ Հեմինգուեյի, Ուիլյամ Սարոյանի և մի շարք այլ հեղինակների կարճ պատմվածքների մեր կատարած թարգմանությունների (մասնավորապես երկխոսությունների) մեջ հաճախադեպ են եղել հաղորդակցական ներակա ամերիկյան նրբերանգները հայերենում որոշակի հաղորդակցական արժեք ներկայացնող բառերով արտահայտելու դեպքերը: Նրանցում հաշվի ենք առել Վ. Վինոգրադովի բառային թարգմանական համարժեքների դասակարգումն ըստ հաղորդվող տեղեկության ծավալի՝ լիակատար և մասնակի, և ըստ լեզվում նրանց գործածման բնույթի: Մեր կատարած աշխատանքում գործաբանական համարժեքության խնդիրը դիտարկել ենք մասնավորապես՝ հաստատուն (առաջնային, բացարձակ հոմանիշներ) և դիպվածային (ստեղծված և բնագրի ոճով պայմանավորված թարգման լեզվի առանձնահատկություններով և թարգմանչի ստեղծագործական անհատականությամբ) տեսանկյուններից [3]:

Եվ բնավ պատահական չէ, որ մեզ հավասարապես հետաքրքրում է այդ երկուսի միասնությունը, որը իրականացում ենք գուգադրական մեթոդով՝ նպատակ ունենալով առավել տեսանելի

դարձնել հետազոտության ամբողջական պատկերը: Մեր ուշադրության կիզակետում եղած հեղինակների թարգմանության և տեսական քննության ծիրում համարժեքությունների հաղորդակցական-գործաբանական խնդիրը պարզելիս առանձնակի տեղ ենք հատկացնում նաև լեզվաոճական, խոսակցական բնույթի արտահայտչամիջոցների վերլուծությանը՝ առավելապես կանգ առնելով թարգմանական հաստատուն և դիպվածային գործաբանական համարժեքության առանձնահատկությունների պահպանման վրա: Ահավասիկ մի հատված էոնեստ Հեմինգուեյի «Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր» պատմվածքից.

Հմմտ. [1] տե՛ս էջ 150 և [6] տե՛ս էջ 7.

“Last week he tried to commit suicide,” one waiter said.  
 “Why?”  
 “He was in despair”.  
 “What about?”  
 “Nothing.”  
 “How do you know it was nothing”  
 “He has plenty of money”.

– Անցած շաբաթ սա փորձել է ինքնասպան լինել,– ասաց մատուցողներից մեկը:  
 – Ինչի՞:  
 – Հուսահատ էր:  
 – Ինչի՞ համար:  
 – Հե՛չ բանի:  
 – Էդ ի՞նչ գիտես՝ հե՛չ բանի:  
 – Շատ փող ունի, ա՛յ թե՛ ինչի:

Այստեղ հիմնականում առկա է ամերիկյան լեզվախոսակցական տարբերակին համապատասխան մոտեցումը:

Էոնեստ Հեմինգուեյի պատումներում համարժեքության խնդիրը դիտարկելիս շատ հաճախ առնչվել ենք օտարաբանություն-փոխառություններ ոճական ոչ ինքնանպատակ միջոցների հետ, որոնք, բնականաբար, փորձել ենք պահպանել թարգմանական տարբերակում՝ առավելապես բնագրին մոտ լինելու ձգտումով: Այսպես.

Հմմտ. [1] տե՛ս էջ 153 և [6] տե՛ս էջ 9.

“Are you trying to insult me?”  
 “No, hombre, only to make a joke”.

– Փորձում ես ինձ նեղացնե՞լ:  
 – Չէ՛, Hombre (ա՛յ մարդ), ուղղակի կատակի համար ասացի:

Նման օրինակ՝ մեկ այլ դեպքում. [1]՝ տե՛ս էջ160 և [6]՝ տե՛ս էջ13.  
“Il piove”, the wife said.

“Si, si, Signora, brutto tempo”

– Անձրև է գալիս,– կինն  
ասաց:  
– Այո՛, այո՛, սի՛նյորա, եղա-  
նակը շատ վատն է:

Օտարաբանությունների ծանոթագրությունները թարգմանիչն է միայն գետեղում տողատակին՝ հասկանալի դարձնելու դրանք իր ընթերցողին: Բնագրային հատվածում օտարաբանության նպատակային գործածությունը ելակետային տեքստին խիստ մերձ մնալու պայմանը թարգմանության մեջ և թարգմանական համարժեքի բացակայությունը ասելիքին հաղորդում է բնագրային նյութին թարգմանչին յուրովի հարազատ մնալու իմաստ: Մեր կատարած աշխատանքում հիմնականում փորձել ենք պահպանել հաստատուն համարժեքային կերպերը, բնագրային կերպարների հուզական ապրումները՝ համապատասխան շարահյուսական (բնագրին հարիր) կառույցների միջոցով՝ նպատակ ունենալով պահպանել խոսքաշարի հաղորդակցային ամբողջականությունը: Մենք կարծում ենք, որ բնագրային կառույցների հայերեն համարժեքները զուտ հաղորդակցական արժեք պետք է ունենան, քանզի դրանք ընտրվում են իմաստային կապը լրացնելու նպատակով: Նույն հարցի քննարկման տիրույթում է նաև խորհրդանիշների՝ որպես յուրատիպ լեզվական գեղագիր միջոցների առկայությունը, և, բնականաբար դրանց թարգմանական համարժեքությունը ևս թարգմանչից առանձնակի ուշադրություն և հմտություն է պահանջում լեզվական տարբեր և տարբերիչ ընկալումների առումով:

Մեր թարգմանական դիտակետում գտնվող հեղինակների (Էռնեստ Հեմինգուեյ, Շերվուդ Անդերսոն, Ուիլյամ Սարոյան և այլք) պատմվածքներում (առանձնապես շեշտադրում անելով երկխոսությունների վրա) թարգմանական համարժեքության հարցը քննելիս թարգմանչի դերը ընկալելով որպես հեղինակի և ընթերցողի յուրօրինակ կամուրջ՝ միշտ փորձում ենք հնարավորինս հավաստի, հակիրճ, անորոշությունից զերծ կերպով մեկնել բնագիրը՝ հետևելով խոսքային համագործակցության գրայսյան հայտնի սկզբունքներին (այն է՝ քանակի, որակի, հարաբերության և ձևի

սկզբունքներ (մաքսիմներ), և որոնել-գտնել տվյալ ասելիքի թարգմանական համարժեքը՝ որոշ դեպքերում հանդես բերելով ստեղծագործական մոտեցում: Թարգմանական համարժեքության խնդիրը, մեր խորին համոզմամբ, պետք է քննարկել լեզվամշակութային հաղորդակցության տարբեր դիտանկյուններից: Էռնեստ Հեմինգուեյի, ինչու չէ, նաև Ուիլյամ Սարոյանի, Շերվուդ Անդերսոնի և այլոց գործերի մեր ներկայացրած թարգմանական համարժեքները քննելիս մշտապես կանգ ենք առնում մի շարք օրախնդիր հարցերի վրա և հատկապես մեր ուշադրության կենտրոնում պահում դրանց հաղորդակցական լիարժեքությունն ապահովող տարրերը: Խոսքը վերաբերում է ոչ միայն տեքստային երկխոսություններին, այլև դիտարկվող ամբողջական նյութին: Գեղարվեստական երկխոսություններում խոսակցական լեզուն կատարում է գեղագիտական գործառույթ, դառնում տվյալ տեքստի ընդհանրական կառույցի, նրա գեղարվեստական բովանդակության և գեղագիտական ընկալման անկապտելի տարրը, ըստ որի էլ թարգմանության գործընթացում ենթարկվում է հնարավոր անխուսափելի փոփոխությունների: Միևնույն ժամանակ, գեղարվեստական երկխոսությունն ունի առանձնահատուկ հաղորդակցական-գործաբանական գործառույթ:

Մենք ուսումնասիրություններում համարժեքության հարցը քննելիս հատուկ տեղ ենք հատկացնում հաղորդակցական-երկխոսական կառույցներին՝ որպես կենդանի խոսքի կրողների, քանզի դրանք բազմազան և շարժընթացիկ են դարձնում գրական ստեղծագործության տեքստային շարադրանքը մասնակիցների գործուն խոսքի միջոցով՝ ստեղծելով իրականության խոսութային զգացողություն: Ինքնին հասկանալի է, որ գրական կերպարները երկխոսության մեջ դրսևորում են իրենց խոսքային, հոգելեզվական նկարագիրը, որն առավել արտահայտիչ է, քան նկարագրման որևէ այլ մեթոդ: Նման եղանակով հնարավոր է ներկայացնել կերպարի ոչ միայն հոգելեզվական, այլև հասարակական բնութագիրը, նրա ինքնագնահատականն ու կարգավիճակը, մի բան, որը գեղարվեստական տեքստի թարգմանչից խիստ մեծ վարպետություն, պատասխանատվություն է ակնկալում և պահանջում:

Տարբեր հեղինակների գործերի մեր կատարած թարգմանություններում համարժեքային խնդիրը դիտարկելիս մշտապես կարևորում ենք հատկապես տեքստի հեղինակի, նաև գործող կերպարների անհատականությունը, հոգեվիճակը, ինքնատիպությունը, լեզվական և խոսքային միջավայրը, նաև խոսող-խոսակից միջավայրի փոխհարաբերությունները: Մեր հետազոտական գործունեության մեջ թարգմանական համարժեքության հարցը քննելիս առաջադրելով գեղարվեստական տեքստի, առանձնապես երկխոսության խոսութային գործառույթի մասին կանխավարկածը նպատակ ենք ունենում պարզաբանելու ասելիքի գործայնությունը (պրագմայնությունը)՝ ըստ մեր դիտանկյունում եղած հեղինակների ստեղծագործությունների:

DOI: <https://doi.org/10.58726/langlit-254-263>

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hemingway E. M. Selected Stories, Moscow: Progress Publishers. 1971, 598 p.
2. Savory Th. The Art of Translation, London, 1968.
3. Виноградов В. В., Стилистика. Теория поэтической речи. Поэтика, АН СССР, М.: Наука, 1963, 255 с.
4. Золян С. Т. Языковые функции: возможные расширения модели Роман Якобсона/Якобсон Р. «Тексты, документы, исследования», - М.: Изд-во РГГУ, 1999.-с.137-148.
5. Якобсон Р.О. Работы по поэтике:Переводы, М.: Прогресс, 1987.- 460с.
6. Հեմինգուեյ Էռնեստ, Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր, Վանաձոր, «ՄԻՄ» տպագրատուն, 2006, 116 էջ:
7. Հովհաննիսյան Գ. Ռ., Հոգեվիզվաբանության ներածություն. Համառոտ դասընթաց, Երևան, Զանգակ-97, 2002, 88 էջ:
8. Հովհաննիսյան Գ. Ռ., Ճանաչողական լեզվաբանության գիտական զարգացման նախադրյալները Հայաստանում, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտ, «Լեզու և լեզվաբանություն», 2003, թիվ 1, Ե, Տաթև գիտակրթական համալիր, էջ 27-32:

## РАССУЖДЕНИЯ ОБ ЭКВИВАЛЕНТНОСТИ ХУДОЖЕСТВЕННОГО ПЕРЕВОДА

*Нина Джагинян*

### Резюме

**Ключевые слова:** *художественный текст, коммуникация, коммуникативная функция, переводчик, художественный диалог, оригинальный текст, дискурсивная функция, стилистические средства выражения*

При анализе проблемы эквивалентности художественного текста особое значение приобретает максимально точное восприятие и изложение лингвистических и стилистических приемов, так как они передают концептуальные и подтекстовые смыслы высказывания, то есть способствуют сохранению когнитивно-прагматической ценности оригинала.

Чтобы добиться качественного художественного перевода, переводчику необходимы соответствующие научно-лингвистические знания, творческие способности, оригинальность мышления и, что не менее важно, эстетический вкус. Проблему переводческой эквивалентности мы рассматриваем как с практической, так и с теоретической точки зрения, поскольку предметом нашего исследования всегда было и остается не только возможное близкое соответствие живого текста оригиналу, но и теоретические дискуссии по этому вопросу.

При широком рассмотрении проблемы художественного перевода необходимо оценить значимость и своеобразие первоисточника, тесно связанного с мировоззрением автора оригинального текста, в котором отражается целостная картина окружающей среды и представления самого писателя, а также его эстетический вкус. Наряду с этим следует учитывать национальный характер переводимого произведения, логику повествования, эмоциональный уровень персонажей. Переводческая эквивалентность – это общность или семантическая близость содержания оригинала и перевода, которая есть не что иное, как смысловое родство между оригинальным и переводным текстами.

## REFLECTIONS ON EQUIVALENCE OF ARTISTIC TRANSLATION

*Nina Jaghinyan*

### Summary

**Key words:** *fiction text, communication, communication function, translator, artistic dialogue, original text, discourse function, stylistic device*

While examining the problem of the equivalence of a literary text, the most accurate perception and presentation of linguo-stylistic techniques acquire special importance, as they contribute to the transmission of the conceptual context, that is, to the preservation of the cognitive- functional value of the original.

In order to achieve a high-quality artistic translation, the translator needs appropriate scientific-linguistic knowledge, creativity, originality and no less important, aesthetic taste. We mainly consider the problem of translation equivalence not only from a practical, but also from a theoretical perspective, for our task has always been and remains not only the possible closest correspondence of the living text, but also the theoretical discussions on it.

When considering the problem of artistic translation in a broad way, it's quite necessary to emphasize and verify the originality of the source text, which is closely related to the worldview of the author of the original text, reflecting the complete picture and perceptions of his environment, as well as his aesthetic taste. Along with this the national image of the translated text, the logic, the emotional level of the characters should be evaluated.

Translation equivalence is the commonality or semantic closeness of the content of the original and the translation, which is nothing but the semantic affinity of the original and the translation.